



## ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐՈՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ (Դալիֆօրնիա, ԱՄՆ)

Կիրակի, Սեպտեմբեր 4, 1989-ին, չորս կիսասարկաագներ ծունկի եկան Ս. Պետրոս եկեղեցու խորանին առջեւ, կատարելու համար իրենց սարկաագութեան ուխտը: Ս. Պետրոս եկեղեցու զաւակներէն չորս երիտասարդներ՝ Միհրան Ծահպազեան, Տիրան Փեթոյեան, Պօղոս Կիրակոսեան եւ Պրայիմ Գրիգորեան կոչուեցան Աւագ Սարկաագութեան աստիճանին: Անոնք կատարեցին, Աստուծոյ եւ մարդոց առջեւ, իրենց խոստումը՝ ծառայելու Աստուծոյ Սուրբ Սեղանին: «Աստուածային եւ երկնաւոր շնորհ»-ը իջաւ անոնց հոգիներուն, կոչելու համար զանոնք եկեղեցու նոր ծառայութեան, զոր յանձն առին, «ըստ վկայութեան անձանց իրեանց»:

Հիւսիսային Ամերիկայի՝ Արեւմտեան Թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեան դրաւ իր Աջը անոնց գլխուն վրայ եւ աղօթեց որ անոնք լեցուին Ս. Հոգիով. «ի սպասաւորութիւն Ս. եկեղեցու»:

Ձեռնադրութեան խարտավիւակներն էին եկեղեցու հովիւ՝ Արժ. Տ. Ծահէ Ա. Քհնյ. Սեմէրճեան եւ Հայաստանէն հիւրաբար Թեմս գտնուող, Գեղարդի Վանահայր՝ Արժ. Տ. Եղիշէ Ա. քհնյ. Սարգսեան:

«Առ քեզ զմաքուր եւ զսուրբ ուրար ի ձեռաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ լեր սուրբ յամենայն խաբէութենէ մեղաց առաջի երեսաց նորա...»: Այս բառերով, ձեռնադրիչ Սրբազան Հայրը անոնց հիւրաբանչիւրին Ուրար կրելու, Ս. Պատարագի ընթացքին Աւետարան կարդալու, խնկարկելու եւ սարկաագի պաշտօնները կատարելու իշխանութիւն տուաւ: Ապա «Ողջոյն»-էն ետք պատարագը շարունակուեցաւ:

Սրբազան Հայրը իր քարոզին մէջ շեշտեց եկեղեցու ծառայութեան կարեւորութիւնը եւ անոր աստուածահաճոյ նպատակը: Իր խօսքին մէջ ան վեր առաւ հիւրաբանչիւր սարկաագի շնորհները եւ իր սրտի գոհունակութիւնը յայտնեց անոնց ձեռնադրութեան առթիւ: Արեւմտեան Թե-





Մի պահ ձեռնադրության արարողությունից

մին, Սբ. Պետրոս եկեղեցույ եւ հաւատա-  
ցեալներու համար այս օրը լատկանշական  
եւ ուրախալի օր մըն էր, տեսնել իր իսկ

արտին մէջ սնած ու հասակ առած զա-  
ւակներու նուիրումը եւ սպասարկելու գի-  
տակցութիւնը:

